*Ցորենի հաց չունես, կորեկի հաց բանացրու.*
*Փէտն ա սիրել աթարը.*
*Փորցածին կրկին փորցողն ա խմար.*
*Քաղցր լեզուն օցը ծակից կը հանի.*
*Քանդիլը ամեն օքմու բան ա, շինիլը քնի.*
*Քարը իր տեղը ծանդր կըլի.*
*Քեասիբի ջանը ախ ու վախով ա դուս գալի, համա էլի օրը չորս հէտ ասմ ա «Աստոծ ըղօրմած ա».*
*Քիրը գնաց քուրանց, հէնց իմացաւ գնաց հօրանց.*
*Քոռ մոշահաւի բունը Աստոծ կը շինի.*
*Քոռը քոսին որ քոս չասի, սիրտը կը ճաքի.*
*Քու ձեռը տար քու սիրտը ռնի.*
*Օխտը քենակալ մի ձորըմ աըմին, վայ մի գրից անող ուռնենանք.*
*Օչով իրան թանին թթու չի ասիլ,*
*Օրէն զարթ ա, տարէն կսկիծ.*
*Օրը գայ բարին հետը,*
*Օրն օրի վրայ բան ա լիս ընգնըմ.*
*Օցը ջուր խմողին դիբչըմ չի.*
*Օցի գլուխը լագլագը կը մարսի.*
*Օցի կծածը կը քնի, սոված քնիլ չի.*
*Օցի չարութինը դըսից կլի, ամա խասիլնը նիրսից.*

## ԵՐԴՈՒՄՆԵՐ

*Աղկատ փոքիս գլողենայ.*
*Անհաղորթ մեռնիմ թէ…*
*Անըն հօրը գլոդենայ,*
*Աստծու աղ ու հացին քոռ մոնկ տամ, թէ սասծնիս ըղորդ չըլեն։*
*Աստծու արդարութինը գլողենայ.*
*Աստծու ըղաքին սևէրես ըլիմ թէ…*
*Աստծու տակին եմ ասում, թող միջնորդ ըլի։*
*Աստոծ, երգինք, ծով, ցամաք.*

*Գիդլինը մոնեմ, թէ սուտ ասեմ.*
*Դեղնաթիզումք սուփ Նշանը վզայ ըլի։*
*Դժոխկի փայ ըլեմ, թէ…*
*Դու ու քու խղճմտանքը.*
*Ես ըլիմ էն բող ձիաւոր Ս. Սարքիսը.*
*Ես ոչ կարմիր ձու կլպեմ, թէ…*
*Երգինք գլողենայ.*
*Զինաւոր սուրբ Գէորքայ զօրքը[1]) գլողենայ.*
*Էն ախպէրութինը գլողենայ.*

[1]) Զօրութիւն և ոչ թէ զինուորական ոյժը.

*Էն անմահ պատարաքը գիդենայ.*

*Էն անոշ քիր ու ախպէրութինը գիդենայ.*

*Էն առէք կիրէքը գիդենայ.*

*Էն արթար ճամփէն վգայ.*

*Էն բաժակը վկայ.*

*Էն բարի լիսը գիդենայ.*

*Էն բարով Աստծու բարինը գիդենայ, որ...*

*Էն կաղնի սուրփ խէչը գիդենայ.*

*Էն կմնաչ մեռոնը գիդենայ.*

*Էն կապիտ Աստոծը գիդենայ.*

*Էն կարմիր Աւետարանը վգայ.*

*Էն նշխարքը վգայ.*

*Էն շղակոլոլ ըրեգնակը գիդենայ.*

*Էն պաշտում պատարաքը գիդենայ.*

*Էն պէլացած րեքնակը գիդենայ.*

*Էն բարի օրը գիդենայ.*

*Էս հացը գիդենայ.*

*Էս հացը փօքուս չգտնվի, թէ սուտ ասեմ.*

*Էս հացի բարաքեաթը վգայ,*

*Էս հացին քօռ մտիկ տամ, թէ մուխաննաթ դառնամ. կամ թէ մուխաննաթութինը անեմ.*

*Էս հացի զօրքը գիդենայ.*

*Էս ճրաքի լսին կապուած մնամ.*

*Էս ճրաքը վգայ.*

*Էս սուրբ մատաղը վգայ.*

*Էս տէրտէրի կարգը գիդենայ.*

*Թող Աստոծ գլխիս քար գցի, թէ...*

*Իմ աղիզ ճամփորթի տեսաքին ոչ արժանի ըլիմ, թէ...*

*Իմ ախչկայ ձի էլած ճամփէն գիդենայ.*

*Իմ ախպօր աղիզ արեը.*

*Իմ աղ ու հացը քու աճկերը կապի, թէ...*

*Իմ արեը գիդենայ, իմ արեա վգայ.*

*Իմ հօր գերեզմանը գիդենայ.*

*Իրան, Քրիստոսայ անըմը կտամ ու փող ծուլ կանեմ, հւատայ.*

*Իրար հետ կերած աղ ու հացը գիդենայ.*

*Կամակատար քաղցր Աստոձաձինը վգայ.*

*Հօրս փօքին գիդենայ.*

*Ճրագի հետ հանգչեմ, թէ սուտ ասեմ.*

*Մեր մէր ու որթութինը գիդենայ.*

*Մուրազատու սուրփ Սարքիսը գիդենայ.*

*Ցութի զաւակ ըլեմ թէ գիդենամ.*

*Էն օրը մահ ըլի ինձ, որ...*

*Ոչ համնում իմ մուրազին, թէ...*

*Պարտական մնամ աւուր դադաստանին.*

*Սուտ ես խօսըմ, փօքուդ ծանդրութին տայ մի։*

*Սուրփ աւազանն ու մեռոնը վգայ.*

*Քու աղ ու հացին կապուած ըլեմ.*

Քու աղ ու հացին քոռ մը-տիկ տամ, թէ սուտ ըլեմ ա-սելիս.

Քու անոշ բարովը գիդենայ,

Քու օխտը պօրտի մեղքին տէր ըլեմ, թէ...

Օջաղի խէր ու բարաքեա-թը վգայ.

Ցող ու ջուրը վգայ.

Ցոքիս սատանի փայ դառ-նայ, թէ...

## ՕՐՀՆԱՆՔ

### Մանուկներին

Արեդ ապրի.

Արևիդ մեռնիմ.

Արևով կշտանաս.

Արևս արևիդ ղուրբան, ջա-նըս ջանիդ։

Բարի իշատակ ըլիս.

Բարին քեզ մօտ.

Գլխիդ ու արևիդ մատաղ.

Գլխովդ պտիտ գամ.

Ըմբրարև ըլիս.

Ծառի պէս ծաղկիս, ծաղկի պէս փոտ տաս.

Ծլիս, ծաղկիս.

Կարմիրդ կապենք.

Հալալ կաթնակերի արժա-նի ըլիս։

### Նորապսակներին.

Աչքի լուսով պառուիք.

Աստուած անփոշմանելի ա-նի.

Բարով սև օր չը տեսնուք.

Թադ ու պարծանք ըլիք.

Թագիդ հետ երգարիս, թա-գուհի։

Ճղկճղկնոտիս.

Մի բարցի ծերանաք.

Մուրազիդ հասնուս.

Ձեր առջնեքը տղայ ըլի.

Տէրդ ապրի.

Փնջփնջնոտիս.

Ցոգուդ վրայ լիս վէր գայ.

Ցոգիդ սրբերի դասը դա-սուի.

### Սկեսուրը հարսին.

Անուշով հարս դառնաս, բարով խէրով իմ տարսը դառ-նաս.

Ազու ծիծը քեզ բարեխօս.

Աչքի լըսով, ցամաք աչքով ապրիք.

Բար ու նուբարը արևներիդ.

Զախու ծիծս քեզ պհապան.

Շէն մնայ քու հօր տունը.

Որդկերանցդ արևի խէրը տեսնուս.

Քու աչքը քի էրնէկ տայ.

Քու գլխի տիրոջ հետ եր-գարիս.

Քու տէրդ ապրի.

Քու տէրդ գլխիցդ անպա-կաս ըլի.

Ծոցինդ ապրի.

### Ծննդկանին.

Աշխարքին պէտքական, ա-մենքին սիրեկան-դիրեկան ըլի.

Աչքդ լիս, բաղդաւոր ղա-ւակ ըլի.

Աստուծ օխտը ձեռով քեզ բաշխի.